ԴՊՐՈՑ

# «ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ» ՂՈՂԱՆՋՆԵՐՈՎ՝ ԴԵՊԻ ՄԵԾ ԿՅԱՆՔ

*Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության որոշմամբ, երկրի հանրակրթական դպրոցների 12-րդ դասարանցիները մայիսի 20-ին հրաժեշտ տվեցին դպրոցին:*

*Դպրոցական կյանքի այդ անմոռանալի ու կարեւոր իրադարձությանն են արձագանքում Թբիլիսիից ու տարբեր տարածաշրջաններից «Վրաստանի» ստացված հաղորդագրությունները:*

АԽԱԼՔԱԼԱՔԻ

## ՀՈՎՀ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴՊՐՈՑԻ 53 ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՑ 28-Ը ԱՊԱԳԱ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ԵՆ



Մայիսի 22-ին, Ախալքալաքիի Թումանյանի անվան թիվ 1 հանրային դպրոցում հնչեց «Վերջին զանգը»: Շրջանավարտներին բարի երթ մաղթելու էին եկել ուսուցիչներն ու ծնողները:

Շրջանավարտներին բարի երթ մաղթեցին դպրոցի տնօրեն Ռուզան Տեփոյանը եւ ուսմասվար Անահիտ Կարապետյանը:

Թումանյանի անվան թիվ 1 հանրային դպրոցն այս տարի ունի 53 շրջանավարտ, որից 28-ը դիմորդներ են: Վրաստան է դիմել 18 դիմորդ, Հայաստան՝ 6, իսկ ռուսական բուհեր արդեն ընդունվել են 4-ը:

**Ինչպես տեղեկացրեց Ախալքալաքիի ռեսուրս-կենտրոնի ղեկավար Թերեզա Չիվչյանը, այս տարի Ախալքալաքիի մունիցիպալիտետի հայկական դպրոցներն ավարտեց 619 շրջանավարտ:**

ՆԻՆՈԾՄԻՆԴԱ

## «ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԸ» ՀԵՇՏԻԱՅԻ ԹԻՎ 2 ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Մայիսի 20-ին Նինոծմինդայի մունիցիպալիտետի Հեշտիա գյուղի թիվ 2 հանրային դպրոցում հնչեց 2021-2022 ուսումնական տարվա «Վերջին զանգը»:

Դպրոցին հրաժեշտ տվեց 10 շրջանավարտ՝ 5 աղջիկ եւ 5 տղա, նրանք 54-րդ շրջանավարտներն են դպրոցի հիմնումից՝ 1968 թվականից մինչեւ այսօր: 12-րդցիների դասղեկը Շոթա Յաժյանն էր:

Ամեն սկիզբ իր ավարտն ունի, բայց ամեն ավարտ մի նոր սկիզբ է. նրանք ավարտում են՝ թողնելով գեղե-



ցիկ հուշեր, մտնում նոր ու մեծ կյանք՝ իրենց տեղը զիջելով գալիք սերնդին:

Թիվ 2 դպրոցը սեպտեմբերին կընդունի 16 առաջին դասարանցի:

**Ինչպես տեղեկացրեց Նինոծմինդայի հանրակրթական ռեսուրս-կենտրոնի աշխատակցուհի Սիլվա Փութուլյանը, այս տարի մունիցիպալիտետի հայկական դպրոցների շրջանավարտների թիվը հասավ շուրջ 300-ի:**

ԹԲԻԼԻՍԻ

## ԿԱՆԱՉ ԱՐԱՀԵՏՆԵՐ ՁԵԶ, ՍԻՐԵԼԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ



«Վերջին զանգի» ղողանջներում, ցավոք, կա նաեւ տխրություն. դա ե՛ւ ուսուցիչներն են վերապրում, ե՛ւ ավարտողները:

Եվ այդուհանդերձ, Թբիլիսիի թիվ 104 հանրային հայկական դպրոցի հերթական շրջանավարտներին հրաժեշտ տվեցին այդ ավանդական, սիրված ու սպասված տոնական միջոցառումով:

Այս տարվա 25 շրջանավարտների շարքում Թբիլիսիի թիվ 104 հանրային հայկական դպրոցն ունի 6 մեդալակիր՝ Աննա Թորոսյան, Մարիաննա Մանուկյան, Մարի Կազարովա, Մարիաննա Մկրտչյան, Թելման Մխիթարյան, Վիկա Մխիթարյան: Բոլոր մեդալակիրները ու նաեւ դասարանի մյուս աշակերտներից ոմանք պատրաստվում

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ՝ ՀԱՆՐԱՃԱՆԱՉ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՀԵՏ

# ԳԱԳԻԿ ԴԱՎԹՅԱՆ. «ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ԱՆՑԿԱՑՈՒՄՈՎ ԵՍ ԻՆՔՍ ԻՆՁ ՄԵԾ ՆՎԵՐ ԵՄ ԱՆՈՒՄ»

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

***- «Գրավորի» մեջ հավանաբար նկատի ունեք Ձեր երեք նոր մրցանակները, քանի որ արդեն իսկ ՎԳՄ Իվանե Մաչաբելու (2007), Գալակտիոն Տաբիձեի անվան մրցանակակիր, ՎԳՄ մշակույթի դեսպանորդ եք, ինչպես նաեւ «Ռուսթավելի» ընկերության Դավիթ Գուրամիշվիլու անվան մրցանակակիր:***

- Այո՛, շնորհակալությամբ պետք է ասեմ, որ այսօր արժանացա «Բեղուն ստեղծագործական գործունեության եւ վրաց-հայկական գրական կապերի մեջ ունեցած առանձնահատուկ ավանդի համար» Վրաստանի գրողների միության մրցանակին: Ի դեպ, այս պարգեւին առայսօր արժանացել է միայն Սայաթ-Նովայի եւ Հրանտ Մաթեւոսյանի ստեղծագործությունների մեծատաղանդ թարգմանիչ, երջանկահիշատակ Ձեզվա Մեդուլաշվիլին: Իսկ ես առաջին ոչ վրաստանցի դափնեկիրն եմ: Երկրորդը՝ Շ.Ռուսթավելի ընկերության «Տարվա լավագույն բանաստեղծ» կոչումն էր, որին արժանացա ընկերության նախագահի, բանաստեղծ, արձակագիր Դավիթ Շեմոքմեդելու կողմից, եւ վերջապես, «Հայ եւ վրացի ժողովուրդների միջեւ բարեկամության ամրապնդման գործում ունեցած ավանդի համար» շնորհակալագիր ստացա Վրաստանում Հայաստանի դեսպանության կողմից: Նշեմ նաեւ, որ ինձ հետ Հայաստան եմ տանում Էլենե Գամցոնիձեի, Ռեզո Ադամիայի հրաշալի կտավները եւս, որոնք դահլիճում ներկա հեղինակներն անձամբ նվիրեցին ինձ:

***- Կյանքի 75 տարիների գրեթե կեսը Գագիկ Դավթյանը անսակարկ նվիրումով ծառայել է Հայաստանում մեր պոեզիայի հանրայնացմանը,- իր ելույթում ընդգծեց Մաղվալա Գոնաշվիլին: Պատմեք, խնդրում եմ, այդ նվիրումի ակունքների մասին:***

- Կյանքիս 75 տարիների կեսը, կարելի է ասել, կապել եմ վրացական պոեզիայի հետ: Սկիզբը 1985 թվականին էր, երբ առաջին անգամ եկա Թբիլիսի մասնակցելու «Մայակովսկու օրերին»: Այդ ժամանակ ո՛չ ընկեր ունեի Թբիլիսիում, ո՛չ բարեկամ: Բազում երկրներից ժամանած հավակնորդներից հենց ես արժանացա այդ մրցանակին: Մրցանակը կիսեցինք ես ու վրացի բանաստեղծներ Դավիթ Մճեդլուրին եւ Լաշա Նադարեիշվիլին: Սա կառավարական, պետական մրցանակ էր՝ 1000 ռուբլի հոնորարով: Այդ վերաբերմունքն ինձ ստիպեց խորանալ վրացական պոեզիայի մեջ: Մրցանակը ստանալուց խոստացա, որ կկազմեմ վրացական պոեզիայի իմ սերնդակիցների անթոլոգիան: Քիչ անց, Շոթա Նիշնիանիձեն Վարդգես Պետրոսյանին (այդ տարիների Վրաստանի ու Հայաստանի գրողների միությունների նախագահներ) նամակ գրեց՝ նշելով իմ ցանկության մասին, ուղարկեց երաշխավորվող բանաստեղծների ցանկը եւ մոտ հազար էջ տողացի թարգմանություն: Այդ տողացիներից իմ ընտրությամբ եւ թարգմանությամբ 1988 թվականին լույս տեսավ իմ առաջին անթոլոգիան՝ «Սիրո ժառանգորդները»: Չէինք հասցրել վայելել անթոլոգիայի թարգմանությունը Երեւանում, երբ Թբիլիսիում երեք բանաստեղծներ թարգմանեցին արդեն իմ բանաստեղծությունները, որոնք հրատարակեցին գրքով՝ անվանելով «Արեւն ու մենք»: Սա իմ առաջին վրացերեն ժողովածուն էր, թարգմանիչներն էին Վախթանգ Խարչիլավան, Բաղաթեր Արաբուլին, Վաժա Խարանաուլին, գլխավոր խմբագիրը Դավիթ Մճեդլուրին էր: Այսպես սկսվեցին մեր փոխհարաբերությունները: Ես արդեն մտադրվել էի, որ վրացերեն պիտի սովորեմ, երբ եկան Խորհրդային Միության փլուզման ժամանակները... Խզվեցին նաեւ գրական կապերը, մենք գնացինք ազգային մեր բնակարանը, վրացիները մնացին ազգային իրենց բնակարանում:

***- Հայ-վրացական հետխորհրդային գրական կապերի վերականգնման գործում հաճախ հոլովվում են Լեւոն Անանյանի, Մաղվալա Գոնաշվիլու, Ռեւազ Միշվելաձեի անունները... ինչպե՞ս նորից սկսվեց ամեն ինչ Ձեր պարագայում:***

- Իհարկե, 2006 թվականին Ռեւազ Միշվելաձեն, Մաղվալա Գոնաշվիլին, Լեւոն Անանյանը եւ, իհարկե, Անահիտ Բոստանջյանը ձեռնարկեցին այդ կապերը վերականգնելու աշխատանքը: Հաջորդ տարին ինձ հրավիրեցին Թբիլիսի՝ երկրորդ անթոլոգիան կազմելու: Մի ամբողջ ամիս, 2007 թվականի օգոստոսը, աշխատեցի ու ապրեցի Մաղվալա Գոնաշվիլու տանը: Ստեղծեցինք «20-րդ դարի վրացական պոեզիա» անթոլոգիան: Անթոլոգիայի առաջաբանը գրել էր բանասիրական գիտությունների դոկտոր Սոսո Սիգուան: Իմ երկրորդ անթոլոգիայի շնորհանդեսը առիթ դարձավ, որպեսզի կազմակերպվեր «Վրացական պոեզիայի փառատոնը» Հայաստանում: Փառատոնը կայացավ Երեւանում եւ իմ ծննդավայր Սյունիքում, քանի որ այդ թվականը զուգադիպում էր 60-ամյակիս հետ: Տասը վրացի բանաստեղծներ եկան Սյունիք, միասին տոնեցինք հոբելյանս ու անցկացրինք «Վրացական պոեզիայի փառատոն»: Ապա իրար հաջորդեցին «Հայ պոեզիայի փառատոնը Վրաստանում», «Վրացական պոեզիայի փառատոնը Հայաստանում», գրքերի շնորհանդեսներ Երեւանում, Թբիլիսիում: Այդ ընթացքում, 2013 թվականին Թբիլիսիում լույս տեսավ իմ երկրորդ՝ «Բաց նամակ» վրացերեն գիրքը՝ Վրաստանի մշակույթի նախարարության, այդ տարիների նախարար Գուրամ Օդիշարիայի աջակցությամբ:

***- ...Եվ շնորհանդեսը, ավանդույթի համաձայն, նորից կայացավ Թբիլիսիում:***

- Այո՛, ի դեպ, երջանկահիշատակ Անահիտ Բոստանջյանը «Վրաստան» թերթում լուսաբանեց այս առիթը՝ վերնագրելով հոդվածը «Գագիկ Դավթյանի գրքերի շնորհանդեսը» անվամբ: Ինչո՞ւ, որովհետեւ Վրաստանի մշակույթի նախարարության դահլիճում կայացած շնորհանդեսին ես եկել էի նվերով, բերել էի արդի վրացի բանաստեղծների նորից մի անթոլոգիա: Հետո արդեն 2017 թվականն էր, երբ նորից Թբիլիսիում նշվեց իմ 70-ամյակն ու 500 էջանոց նոր անթոլոգիայի ծնունդը: Եվ ահա այսօր, նորից Թբիլիսիում շնորհանդես ունեցանք՝ ամենաջերմ ու բարեկամական միջավայրում, այս փառահեղ պատերի ներսում: Ասեմ, որ Թբիլիսիում շնորհանդեսի անցկացմամբ ես ինքս ինձ մեծ նվեր եմ անում...

***- «101 բանաստեղծ Գագիկ Դավթյանի թարգմանությամբ» ժողովածուում գերակշռում են վրացի բանաստեղծները:***

- Ինչ խոսք, դա խոսում է միայն ու, իհարկե, վրացական պոեզիայի հանդեպ իմ մեծ սիրով: Ես շատ բարձր եմ գնահատում վրացական պոեզիան, այն իսկապես կյանքի պոեզիա է... Այդ է պատճառը, որ «առյուծի բաժինը» տրամադրել եմ հենց վրացի ստեղծագործողներին, որոնք հիմնականում իմ սերնդակիցներն են: Բայց ես թարգմանել եմ նաեւ Աննա Կալանդաձեին, Մուխրան Մաճավարիանուն, Ջանսուղ Չարկվիանուն, Բեսիկ Խարանաուլուն... ընդհանուր առմամբ, 35 բանաստեղծի թարգմանիչ եմ:

***- Իսկ դժվար չէ՞, չտիրապետելով լեզվին, թարգմանել այդ լեզվից:***

- Բնականաբար, այո: Ցավոք, ժամանակները նպաստավոր չեղան լեզվին տիրապետելու իմ ցանկության տեսանկյունից: Բայց պետք է ասեմ, որ իմ թարգմանությունները մշտապես արժանացել են բարձր գնահատանքի, սիրվել են հայ ընթերցողի կողմից, քանի որ հիանալի տողացիներ եմ ունեցել, հաճախ հենց հեղինակների հետ անմիջական համագործակցության արդյունքում: Օրինակ, իմ թարգմանությամբ լույս տեսած Մաղվալա Գոնաշվիլու «Արեւի արցունքը» Մաղվալայի հետ «բզիկ-բզիկ ենք» արել ու, երբ գրքի շնորհանդեսը կայացավ Գյումրիում, նա խոստովանեց, որ թարգմանությունն այնքան հոգեհարազատ է, բնագրային, որ եթե ինքը գրեր հայերեն, ապա հաստատ հենց այդպես էր գրելու:

***- Ունե՞ք թարգմանական նոր ծրագրեր:***

- Իհարկե, բայց սա կլինի հեռանկարում, փոխադարձ պայմանավորվածության հիման վրա:

***- Մեր շնորհակալությունը Ձեզ՝ հայ-վրացական եւս մեկ ջերմ ու տաք օր նվիրելու եւ բարեկամ ժողովուրդների թարգմանական գանձարանն է՛լ ավելի գունեղ, հարուստ դարձնելու համար:***

*ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ*

ԴՊՐՈՑ

# «ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ» ՂՈՂԱՆՋՆԵՐՈՎ՝ ԴԵՊԻ ՄԵԾ ԿՅԱՆՔ

(Սկիզբը՝ 5-րդ էջում)

են ընդունվել երկրի տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ: Հիմնականում նախընտրությունը տրված է Իվ.Ջավախիշվիլու պետական համալսարանին, իսկ ընտրված մասնագիտությունները տարբեր են՝ բժշկական, ժուռնալիստիկա, միջազգային հարաբերություններ, համակարգչային գիտություն... Մասնագիտական կողմնորոշման հարցում մեծ է ուսուցիչների եւ առանձնապես տասներկուերորդցիների դասղեկ Գյուլչորա Բաբայանի դերակատարումը, ով, քաջ ճանաչելով իր սաներից յուրաքանչյուրի ունակություններն ու նախասիրությունները, համապատասխան խորհուրդներով ուղղորդել է նրանց:

«Վերջին զանգի» կապակցությամբ շրջանավարտներին շնորհավորեցին դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանը, ուսմասվար Ալմարի Սիրադեղյանը, դասղեկ Գյուլչորա Բաբայանը, ծնող Գայանե Բազոյանը: Երեկոն ուղեկցվեց գեղարվեստական համարներով, որին մասնակցեցին դպրոցի տարբեր դասարանների սաներ:

## ԽԵԼԱՑԻ, ԳԵՂԵՑԻԿ ՈՒ ԽՈՍՏՈՒՄՆԱԼԻՑ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ



Թբիլիսիի թիվ 103 վրաց-հայկական հանրային դպրոցի հայկական բաժինն իր հերթական՝ 2021-2022 ուստարվա շրջանավարտներին ճանապարհեց «Վերջին զանգի» ուրախ եւ տխուր հույզերով:

- Այս տարի ունենք 11 շրջանավարտ: 12-րդ դասարանը դպրոցի լավագույն ու կազմակերպված դասարանն էր,- այդ մասին էին միաբերան վկայում դպրոցի տնօրինությունն ու մանկավարժները,- շնորհալիների մի փունջ: Այդ դասարանցի Անգելինա Գրիգորյանը եւ Հակոբ Չախոյանը, երբ վրացական բաժնից հայկական բաժին տեղափոխվեցին, մայրենի լեզվով գրել-կարդալ չգիտեին, բայց իրենց ջանասիրության եւ հայոց լեզվի ու գրականության վաստակաշատ ուսուցչուհի Գայանե Մխիթարյանի նրանց հետ ունեցած մեղվաջան աշխատանքի շնորհիվ, հաղթահարեցին դժվարությունները եւ այսօր հաջողությամբ ավարտում են կրթօջախը: Իսկ Գայանե Սարգսյանը, ով նույնպես այդ դասարանից է, զարմանալի վարպետությամբ վարեց, Գայանե Մխիթարյանի կազմակերպած «Գարուն, մայրություն, սեր» միջոցառումը, որով երեք տարի անընդմեջ բացվում էր ուսումնական տարին: Դպրոցի մեդալակիրները՝ քույր ու եղբայր Մարիաննա ու Ռազմիկ Գուրգենյանները, արդեն գրանցվել են Թբիլիսիի Իվ.Ջավախիշվիլու պետական համալսարանում եւ հուսով են, որ, «1+4» նախագծի շնորհիվ, կդառնան համալսարանի ուսանողներ: Եվս չորս աշակերտ, որ փայլուն տիրապետում են վրացերենին, պատրաստվում են ուսանել մայրաքաղաքի տարբեր բուհերում:

Դպրոցն ափսոսանքով էր հրաժեշտ տալիս իրենց շատ սիրելի սաներին: Հայրական խրատներով էր հագեցած դպրոցի տնօրեն Արչիլ Չխաիձեի՝ ավարտականներին հղված շնորհավորանքը: Շրջանավարտներին ջերմորեն շնորհավորեցին փոխտնօրեն Հասմիկ Պապիկյանը, նրանց սիրելի դասղեկ, ռուսաց լեզվի եւ գրականության փորձառու ուսուցիչ Հրաչյա Նուրալյանը:

ՄԱՌՆԵՈՒԼԻ

## ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԹԻՎ 1 ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑԸ ՄԵԾ ԿՅԱՆՔ ՃԱՆԱՊԱՐՀԵՑ ԿՐԹՕՋԱԽԻ 84-ՐԴ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ

Մառնեուլիի մունիցիպալիտետի Շահումյան ավանի թիվ 1 հանրային դպրոցը մեկ սերունդ եւս ճանապարհեց մեծ կյանք: 18 գարուն բոլորած 20 պատանի ու աղջիկ խորին հուզմունքով եւ սրտի թրթիռով բաժանվեցին դպրոցից: «Վերջին զանգ». բաժանում՝ հարազատ կրթօջախից, դասընկերներից, ուսուցիչներից: Նրանցից յուրաքանչյուրը պետք է գնա իր երազների հետեւից, գտնի իր տեղը կյանքում, դրսեւորի իրեն՝ որպես մարդ ու քաղաքացի: Նրանց փոխարինելու է 27 ժիր ու կայտառ առաջին դասարանցի:

**Ինչպես տեղեկացրին Մառնեուլիի մունիցիպալիտետի հանրակրթական ռեսուրս-կենտրոնից, հայկական դպրոցներին հրաժեշտ տվեց 69 շրջանավարտ:**

ԲՈԼՆԻՍԻ

## ԲՈԼՆԻՍ-ԽԱՉԵՆԻ ԴՊՐՈՑԸ ՃԱՆԱՊԱՐՀԵՑ 8-ԻՆ՝ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ 23-ԻՆ



«Վերջին զանգով» Բոլնիսիի մունիցիպալիտետի Բոլնիս-Խաչեն գյուղի հանրային կրթօջախը, որին միացված է հարակից Կիանեթի գյուղի իննամյա դպրոցը, նոր կյանք ճանապարհեց եւս մի նոր սերունդ: Դպրոցն ավարտեցին 8-ը՝ Արթուր Սոլոմոնյանը, Արայիկ Անդրասյանը, Գիորգի Էլոյանը, Ասիտա Բաղդասարյանը, Մարգարիտա Շախդինարյանը, Լիանա Արզումանյանը, Ռիմա Խուբլարյանն ու Անուշ Բաղդասարյանը: Դպրոցում ուրախությամբ նշում են, որ այս տարի արդեն գրանցվել է 23 առաջին դասարանցի:

Ինչ վերաբերում է Բոլնիս քաղաքին, ապա տեղի հայկական դպրոցն ունի 6 շրջանավարտ, դպրոցում ուսանում է 50 աշակերտ:

**Բոլնիսի մունիցիպալիտետի հանրակրթական ռեսուրս-կենտրոնի տվյալներով, այս տարի մունիցիպալիտետի հայկական դպրոցներն ավարտել է 14 շրջանավարտ:**

*Խորագիրի նյութերը պատրաստեց*
*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ*

ՎՐԱՑԱԿԱՆ ԿԻՆՈՅԻ ՕՐԸ

# «ՉՈԽՈՍԱՆՆԵՐԸ» ԵՎ ԿԻՆՈԳՈՐԾԻՉՆԵՐԸ՝ ՍՊԱՍՈՎԿԱՅՈՒՄ

***Այս տարի «Վրացական կինոյի օրը» նշվեց Սամցխե-Ջավախեթիում: Վրաց ճանաչված կինոգետ, վրաց ազգային հերոս Քաքուցա Չոլողաշվիլու անվան «Չոխոսանի» ասպետների ջոկատի ղեկավար, պրոֆեսոր Գոգի Դոլիձեն այդ օրվա նախաձեռնողն է եւ ամեն տարվա մայիսի 5-ին երկրի տարբեր տարածաշրջաններում հետաքրքիր հանդիպումներ է անցկացնում հանդիսատեսի հետ, ցուցադրում՝ կինոնկարներ:***

«Վրացական կինոյի օրը» նշվեց երեք երկրների՝ Վրաստանի, Հայաստանի եւ Թուրքիայի սահմանագծում, Նինոծմինդայի մունիցիպալիտետի Սպասովկա գյուղում, որի վրացական եւ հայկական դպրոցների հետ Գոգի Դոլիձեն պահպանում է սերտ հարաբերություններ:

Գյուղ ժամանած պատվիրակության կազմում էին տեխնիկական համալսարանի պրոֆեսոր, ժամանակին Ռուսթավիի մետալուրգիական գործարանի բազմամյա տնօրեն Գուրամ Քաշակաշվիլին, հայտնի ոսկեգործ Թամազ Ջալաղանիան, ՍՊԸ «Վարձիա ռեզորտի» հիմնադիր Շոթա Նաթենաձեն:

Պատվավոր հյուրերին դպրոցականները դիմավորեցին ասմունքելով: Միջոցառմանը հրավիրված էր նաեւ նույն գյուղի հայկական դպրոցը՝ կրթօջախի տնօրեն Աիդա Չախոյանն իր սաների հետ: Գյուղի վրացական ու հայկական դպրոցների բարեկամությունը էլ ավելի խորացավ նրանից հետո, երբ Գոգի Դոլիձեն 21-րդ դարի սկզբին, ընդամենը մի քանի տարի առաջ երկու դպրոցներում անվճար ճաշարաններ հիմնեց:

Հյուրերը Սամցխե-Ջավախեթի էին բերել վրացերեն, հայերեն եւ ռուսերեն գեղարվեստական գրքեր, այդ թվում՝ հիանալի հոբելյանական եւ բացառիկ հրատարակություններ՝ «Ընձենավորը», Փիրոսմանու եւ Լադո Գուդիաշվիլու ալբոմները, Անտուան դը Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը», Փրիդոն Մաղրաձեի գունավոր հեքիաթները... Բացառիկությամբ աչքի ընկան պրոֆեսոր Գուրամ Քաշակաշվիլու գիտական աշխատությունները, Թամազ Ջալաղանիայի պատրաստած արծաթե երկու դաշույնները, որոնք նա փոխանցեց ինչպես վրացական, այնպես էլ՝ հայկական դպրոցներին: Փոխանցվեց նաեւ «Վրաստան» թերթի խմբագրությունից ստացված Վ.Հովսեփյանի «Երկխոսություն՝ պոեզիայի լեզվով» աշխատությունը, Ակսել Բակունցի «Սպիտակ ձին» ստեղծագործությունը՝ Գելա Գելաշվիլու վրացերեն թարգմանությամբ:

«Վրաստան» թերթը հեռախոսով կապվեց Սպասովկա գյուղի հայկական դպրոցի տնօրեն Աիդա Չախոյանի հետ.

- Մայիսի 15-ը սպասովկացիներիս համար բացառիկ օր էր: Գյուղ էր այցելելու վաղեմի բարեկամ եւ բոլորիս շատ սիրելի Գոգի Դոլիձեն, մի անձնավորություն, ում համար մեր գյուղ այցելելը եւ մեր սովորական օրը տոնական դարձնելը ավանդույթի է վերածվել:

Բացառություն չկազմեց նաեւ ներկայիս այցը: Կազմակերպված էր միջոցառում, որին ներկա էինք նաեւ մենք՝ հայկական դպրոցի ուսուցիչներս ու աշակերտները: Օրը հագեցած էր մեծ բանաստեղծների շնչով: Երեխաները ոգեւորված էին: Նրանց համար ցուցադրվեց հետաքրքիր կինոնկար:



Ինչպես միշտ, այս անգամ էլ պարոն Գոգին դատարկաձեռն չէր եկել: Նա մեր դպրոցի գրադարանին նվիրեց շատ արժեքավոր ու եզակի գրքեր:

Շնորհակալություն նրանց ուսանելի եւ խրատական խոսքերի, անշահախնդիր վերաբերմունքի եւ ուշադրության համար,- ասաց Աիդա Չախոյանը:

***ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ***

### ՉՈԽԱՅԻ ԵՎ «ՉՈԽՈՍԱՆՆԵՐԻ» ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

*«Չուխա կամ չոխա»՝ վրացական ազգային տարազ է: Նախկինում չոխա կրում էին միայն մեծահարուստները: Այն կարելու համար երբեմն ամիսներ էին պահանջվում: Չոխան կարում էին հասարակ եւ թանկարժեք կտորներից, զարդարում ոսկե ու արծաթե թելերով, ավելացնում տարբեր դետալներ: Ժամանակի ընթացքում չոխա ունենալը տղամարդկանց համար դարձավ արժանապատվության հարց: Յուրաքանչյուր տղամարդ, ելնելով իր սոցիալական կարգավիճակից, ուներ առնվազն մեկ չոխա: Օրինակ՝ գյուղացին ուներ մեկ էժանագին կտորից կարված զգեստ, որը կրում էր միայն տոն օրերին: Հետագայում չոխան դարձավ ամենօրյա հագուստ: Նրա վրա ավելացան նոր դետալներ: Աստիճանաբար դետալների թիվը հասավ 34-ի:*

*Տղամարդու չոխայի վերեւի հատվածում՝ սրտի մոտ, ավելացավ մի քանի դետալ՝ փամփուշտներ կրելու համար փոքրիկ գրպան: Սրտից վերեւ, ձախ մասում, ամրացնում էին այսպես կոչված պապանակիներ՝ սոցիալական ծագումը հաստատող նշաններ: Չոխայի պարտադիր տարրերից էր երկար կաշվից պատրաստված գոտին:*

*Իսկ ինչ վերաբերում է «Չոխոսանների» միավորմանը, ապա դա ոչ քաղաքական հասարակական կազմակերպություն է:*

*Շարժման ակունքը 1921 թվականին Խորհրդային Ռուսաստանի կողմից Վրաստանի ժողովրդավարական Հանրապետության բռնազավթման դեմ բողոքի նշանն էր, երբ չորս երիտասարդ մտավորականներ՝ Կոնստանտինե Գամսախուրդիան, Վախթանգ Կոտետիշվիլին, Պավլե Ինգորոդվան եւ Ալեքսանդրե Աբաշելին հագան իրենց ազգային տարազը՝ սեւ չոխա արխալուղներ:*

*Երկրի անկախության ձեռքբերումից հետո, Վրաստանում «Չոխոսանների» ընկերության հիմնման գլխավոր շարժառիթը ոչ թե խորհրդային բռնատիրության դեմ բողոքն էր, այլ վրաց ազգի պատմական եւ մշակութային արժեքների պաշտպանությունը: 2006 թվականի հունվարի 23-ին անցկացվեց «Համայն Վրաստանի չոխոսան ասպետների» պաշտոնական շնորհանդեսը (նախագահ՝ պրոֆեսոր Գոգի Դոլիձե):*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԵՄԱՏ, ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՆ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ 123 310-ՈՎ»



*Մայիսի 24-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը ներկա գտնվեց Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդի (ԱՆԻՖ) եռամյա՝ 2019-2021թթ. գործունեության զեկույցի ներկայացմանը նվիրված միջոցառմանը, որի ընթացքում ամփոփվել են ԱՆԻՖ-ի հաշվետու ժամանակահատվածի իրականացրած բոլոր ծրագրերը:*

Իր խոսքում վարչապետ Փաշինյանը հիշեցրել է, որ ԱՆԻՖ-ը ստեղծվել է երեք տարի առաջ, եւ այս ընթացքում կառավարությունը մեծ հույսեր է կապել եւ շարունակում է կապել նրա հետ:

Նիկոլ Փաշինյանն անդրադարձել է ժամանակին կայացրած մի քանի որոշումների ազդեցությանը տնտեսության վրա:

- Օրինակ, 2018 թվականին քաղաքական որոշում կայացրեցինք Հայաստանում համահարթ եկամտահարկ ներդնելու մասին: Հիշո՞ւմ եք՝ այն ժամանակ էլ շատ էր քննադատությունը, շատ էր հոռետեսությունը, բայց պիտի ասեմ, որ, օրինակ, ապրիլ ամսվա տվյալներով, մենք Հայաստանի աշխատաշուկայում ունենք նոր բացարձակ ռեկորդ: Այսինքն, ապրիլի դրությամբ, Հայաստանում գրանցված աշխատատեղերի բացարձակ թիվը մեծ է նախկինում եղած բոլոր ժամանակներից: Սովորաբար, մենք վերջին այդպիսի ռեկորդը համարում ենք 2021 թվականի դեկտեմբերը, որն ավանդաբար ամենաբարձր աշխատատեղ ունեցող ամիսն է, բայց արդեն ապրիլին մենք 5000-ից ավելի աշխատատեղով գերազանցել ենք նախորդ ռեկորդը, իսկ 2018 թվականի համեմատ, Հայաստանում այսօր 123 հազար 310-ով ավելի աշխատատեղ ունենք: Խոսքը ոչ միայն գրանցված, այլ աշխատավարձ վճարվող աշխատատեղերի մասին է, որովհետեւ կան աշխատատեղեր, որոնցից եկամտահարկ չի գեներացվում,- ընդգծել է Կառավարության ղեկավարը:

## ԵՌԱԿՈՂՄ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ

*Մայիսի 22-ին Բրյուսելում, Եվրոպայի խորհրդի նախագահ Շառլ Միշելի մասնակցությամբ, անցկացվեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հանդիպումը:*



Եռակողմ հանդիպման արդյունքները հանրագումարեց Եվրոպայի խորհրդի նախագահը: Նրա հայտարարությամբ, բրյուսելյան քննարկումներն անկեղծ ու արդյունավետ էին:

«Մենք քննարկել ենք հարցերի ամբողջ փաթեթը եւ հասանք հետեւյալ արդյունքներին.

**Սահմանային հարցեր** - Տեղի կունենա միջպետական սահմանի վերաբերյալ սահմանային հանձնաժողովների առաջին համատեղ նիստը: Այն ընդգրկում է սահմանների սահմանազատման հետ կապված բոլոր հարցերը:

**Հաղորդակցություններ** - Առաջնորդները համաձայնել են տրանսպորտային կապերն ապաշրջափակելու անհրաժեշտության մասին:

**Խաղաղության համաձայնագիր** - Պայմանավորվել են շարունակել քննարկումները խաղաղ համաձայնագրի շուրջ, որը կարգավորում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ միջպետական հարաբերությունները: Բացի սրանից, անհրաժեշտ է խոսել Ղարաբաղում էթնիկ հայ բնակչության իրավունքների եւ անվտանգության մասին:

**Սոցիալ-տնտեսական զարգացում** - Եվրամիությունը կշարունակի աշխատել երկու կողմերի հետ տնտեսական խորհրդատվական խմբի վրա, որի նպատակն է զարգացնել տնտեսական զարգացումը՝ ի շահ երկու երկրների եւ նրանց ժողովուրդների»,- ասվում է Եվրամիության խորհրդի կայքում տեղադրված հաղորդագրության մեջ:

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐՄԱՏԱԽԻԼ Է ԱՐՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՆ

*Հայաստանը վերջին չորս տարվա ընթացքում զգալի առաջընթաց է գրանցել կոռուպցիայի դեմ պայքարում:*

Այս մասին Միջազգային հարաբերությունների նիդերլանդական ինստիտուտում՝ Քլինգենդայլում, նշեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ «Հայաստանը եւ Նիդերլանդները. դարավոր բարեկամություն-30-ամյա գործընկերություն» թեմայով դասախոսության ժամանակ:

Հայաստանի վարչապետը նշեց, որ 2021 թվականին առաջին անգամ Հայաստանը միջազգային ժողովրդավարական ինստիտուտների կողմից դասակարգվել է ընտրական ժողովրդավարություն ունեցող երկրների շարքում, ինչը կարեւոր ձեռքբերում է: Նա նշեց, որ վերջին 4 տարվա ընթացքում Հայաստանը իսկայական առաջընթաց է արձանագրել կոռուպցիայի դեմ պայքարում:

- Այո', պետք է բարձր հայտարարություն անեմ ու ասեմ, որ Հայաստանում համակարգային կոռուպցիան արմատախիլ է արված: Վերջին հրապարակված ինդեքսներով, Հայաստանն աշխարհում 51-րդն է: Եվրոպական շուրջ տասը երկրից ավելի լավ դիրքերում է: Սա ասում եմ նրա համար, թե որքան վճռական ենք ժողովրդավարական բարեփոխումներ իրականացնելու հարցում,- ասաց Նիկոլ Փաշինյանը եւ հավելեց, որ Հայաստանում փակվել են այնպիսի էջեր, ինչպիսիք են ընտրությունների արդյունքների նկատմամբ հանրային կասկածը, ընտրությունները կեղծելու պրակտիկան: Նա ընդգծեց, որ Հայաստանը հետ ճանապարհ չունի:

## ՉՈՐՍ ԱՄՍՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԿԱԶՄԵԼ Է 9,4 ՏՈԿՈՍ

*Հայաստանի վիճակագրական ծառայության տվյալներով, Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը 2022 թվականի հունվար-ապրիլին 9,4 տոկոսով ավելացել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ:*

Արդյունաբերական արտադրանքի ծավալը այս տարվա հունվար-ապրիլին, նախորդ տարվա հունվար-ապրիլի համեմատ, ավելացել է 2,6 տոկոսով: Իսկ շինարարության ծավալը 2022-ի առաջին 4 ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել է 9 տոկոսով: Առեւտրի շրջանառությունում հունվար-ապրիլին 2021-ի հունվար-ապրիլի նկատմամբ աճը կազմել է 7,8 տոկոս:

2022 թվականի հունվար-ապրիլին սպառողական գների ինդեքսը, 2021-ի նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 7,4 տոկոսով, իսկ արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսը՝ 10,8 տոկոսով: Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալն այս տարվա առաջին 4 ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել է 14,1 տոկոսով:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆ ՈՒ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՆ

*Մայիսի 21-26-ը Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանը եւ փոխնախարար Ժաննա Անդրեասյանը, ՀՀ վարչապետի որոշմամբ, Լոնդոնում մասնակցեցին Համաշխարհային կրթական գագաթաժողովին:*

Նշենք, որ այս տարի Համաշխարհային կրթական գագաթաժողովին մասնակցում են ավելի քան 200 երկրի պատվիրակություններ, այդ թվում՝ 112 երկրի նախարարներ:

Միջոցառման շրջանակներում, Հայաստանի կրթության ոլորտի ղեկավարները հանդիպումներ ունեցան Բարձրագույն կրթության որակի ապահովման կազմակերպության (QAA) գործադիր տնօրեն Ալասթեր Դելեյնիի, Մանկավարժական լրացուցիչ կրթության քոլեջի պրոֆեսոր Դեյմ Էլիսոն Փիքոկի, Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի դեպարտամենտի գործադիր տնօրեն Ջասթին Մըք Քենզի Սմիթի, օտարերկրյա համագործակցության եւ զարգացման հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Ռեբեկա Էտկինսոնի հետ:

Վահրամ Դումանյանը եւ Ժաննա Անդրեասյանն այցելեցին Լոնդոնի համալսարանի կրթության եւ հասարակագիտության ֆակուլտետ, Դարտֆորդի միջնակարգ դպրոց, ստորագրեցին համագործակցության հուշագրի Բրիտանական խորհրդի հետ:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԴԱՎՈՍԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՆ

*Աշխատանքային այցով Շվեյցարիայում գտնվող Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը մասնակցեց Համաշխարհային տնտեսական համաժողովին, որն այս տարի նվիրված է «Պատմությունը շրջադարձային կետում. Կառավարությունների քաղաքականությունը եւ բիզնես ռազմավարությունները» թեմային:*

*Համաժողովի շրջանակում, Հայաստանի նախագահն անցկացրեց մի շարք երկկողմ եւ բազմակողմ հանդիպումներ այլ պետությունների ղեկավարների, միջազգային կառույցների եւ բիզնես ընկերությունների ներկայացուցիչների հետ: Մասնավորապես, Վահագն Խաչատուրյանը հանդիպում ունեցավ Լատվիայի Հանրապետության նախագահ Էգիլս Լեւիտսի, ՖԻՖԱ-ի (Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիա) նախագահ Ջաննի Ինֆանտինոյի հետ:*

### ՎԵՑ ԱՄՍՈՎ ԱՐԳԵԼՎԵՑ ՑՈՐԵՆԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ

*Հայաստանը վեց ամսով արգելել է ցորենի, հնդկաձավարի, եգիպտացորենի, արեւածաղկի եւ գարու արտահանումը: Որոշումն ընդունվել է Հայաստանի կառավարության նիստում:*

*Մամուլի հաղորդագրության մեջ պարզաբանվում է, որ այս ապրանքների Հայաստանի տեղական արտադրությունը չի բավարարում երկրի կարիքները, եւ դա հիմնականում արվում է ներմուծման հաշվին:*

*Արգելքը չի վերաբերում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներին:*

### ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՏՎԱՍՏՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ՀԱՏԵԼ Է ՄԵԿ ՄԻԼԻՈՆԻ ՍԱՀՄԱՆԸ

*Հայաստանում կորոնավիրուսի դեմ ամբողջական պատվաստվածների (2 դեղաչափ ստացածների) թիվը հատել է մեկ միլիոնի սահմանը:*

*Հայաստանի առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի խոսքով, Հայաստանը համաճարակաբանության տեսանկյունից գտնվում է համեմատաբար հանգիստ վիճակում, բայց մի շարք երկրներում, օրինակ՝ Հյուսիսային Կորեա, Ավստրալիա, Ճապոնիա, Թայվան, COVID-19-ը դեռ չի նահանջում:*

*Անահիտ Ավանեսյանը հորդորել է չկորցնել զգոնությունը. շարունակել պատվաստումային գործընթացը:*

*-Պետք չէ մոռանալ՝ պատվաստումը հոգատարություն է, հարկավոր է ամեն ինչ անել, որպեսզի կարողանանք ճիշտ դիմակայել նոր ալիքներին,- հայտարարեց նախարարը:*

### «ՓՅՈՒՆԻԿԸ»՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՄՊԻՈՆ

*Հայաստանի ֆուտբոլի առաջնության ընթացիկ մրցաշրջանի չեմպիոնը Երեւանի «Փյունիկ»-ն է:*

*«Փյունիկ»-ը պրոֆեսիոնալ ֆուտբոլային ակումբ է, որը հիմնադրվել է Երեւանում, 1992 թվականին:*

*Ակումբի հիմնադիրը հայկական ֆուտբոլի լեգենդ Խորեն Հովհաննիսյանն է: Հիմադրման պահից մինչեւ 1995 թվականը թիմը կրել է «Հոմենեթմեն» անվանումը, իսկ հետո վերանվանվել՝ «Փյունիկ»:*

*«Փյունիկը» Հայաստանի ամենափիտղոսակիր ակումբն է. 15 անգամ դարձել է Հայաստանի Բարձրագույն խմբի առաջնության հաղթող, 8 անգամ Հայաստանի Գավաթակիր եւ 9 անգամ Սուպերգավաթակիր:*

## «ՍԱՅԱԹՆՈՎՅԱՆ ՎԱՐԴԱՏՈՆ»-Ը՝ ՄԱՅԻՍԻ 29-ԻՆ, ԺԱՄԸ 13:00-ԻՆ



Կովիդ-19 համավարակի պատճառով երկամյա ընդմիջումից հետո, Թբիլիսիում կրկին կանցկացվի «Սայաթնովյան Վարդատոնը»:

Հիշեցնենք՝ տոնը հիմնադրվել է 1914թ., Թբիլիսիում, Մեծն Հովհ.Թումանյանի, Գեւորգ Բաշինջաղյանի եւ Իոսեբ Գրիշաշվիլու նախաձեռնությամբ:

«Վարդատոնը» կանցկացվի իր ավանդական տեղում՝՝ Թբիլիսիի «Մեյդան» կոչվող թաղամասում, Գորգասալու հրապարակում, Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու հարակից տարածքում մայիսի 29-ին, ժամը՝ 13:00-ին:

Այն անցկացնում է «Վրացահայերի միությունը՝ Թբիլիսիի քաղաքապետարանի, Հայաստանի մշակույթի նախարարության, Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի եւ Վրաստանում Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու աջակցությամբ:

### ՍՊՈՐՏ

## ԼԱՇԱ ՏԱԼԱԽԱՁԵՆ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԾԱՆՐՈՐԴ



Ծանրամարտի Եվրոպայի ֆեդերացիայի կողմից անցկացված հարցման արդյունքներով, Լաշա Տալախաձեն ճանաչվել է 2021 թվականի լավագույն ծանրորդ: Աշխարհի ուժեղագույն ծանրորդների օնլայն հարցմանը նա ստացել է 4750 ձայն:

Անցյալ տարի Լաշա Տալախաձեն հաղթող ճանաչվեց Եվրոպայի եւ աշխարհի առաջնություններում, Տոկիոյի Օլիմպիական խաղերում: Նա տասնյակից ավելի համաշխարհային ռեկորդների հեղինակ է:

Կանանց շրջանում Եվրոպայի լավագույն ծանրորդի կոչմանն արժանացավ Ռումինիայի ներկայացուցիչ Տոմա Լոըեդանը: Նա 2021 թվականին անընդմեջ, չորրորդ անգամ նվաճեց Եվրոպայի չեմպիոնի կոչումը:

Հիշեցնենք, որ մայիսի 27-ին կմեկնարկի ծանրամարտի Եվրոպայի առաջնությունը: Ալբանիայի մայրաքաղաք Տիրանայում անցկացվելիք հոբելյանական՝ 100-րդ առաջնության բացմանը, տեղի կունենա Եվրոպայի լավագույն ծանրորդների պարգեւատրման արարողությունը:

## ՀՈՒՆԻՍԻ 1-Ը ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է



Հունիսի 1-ը նշանավորվում է ոչ միայն իբրեւ ամռան առաջին օր, այլեւ երեխաների պաշտպանության միջազգային օր: Այս տոնը ամենահին միջազգային տոներից մեկն է:

Երեխաների պաշտպանության միջազգային օրը սահմանվել է դեռեւս 1925 թվականին Ժնեւում՝ երեխաների պաշտպանության համար հրավիրված համաշխարհային կոնֆերանսի ընթացքում:

1949թ. Կանանց ժողովրդավարական միջազգային դաշինքը՝ «երեխաների պաշտպանության օր» անցկացնելու որոշում է ընդունել:

Առաջին անգամ հունիսի 1-ը՝ որպես «երեխաների պաշտպանության միջազգային օր», նշվել է 1950 թվականին:

Վրաստանն ու Հայաստանը երեխաների մասին կոնվենցիան վավերացրել են 1992թ., ապա՝ 1996թ. ընդունվել է «երեխաների իրավունքների մասին» օրենքը:

Նշենք, որ Վրաստանի խորհրդարանին՝ որպես օրենսդրական նախաձեռնություն, ներկայացվել է առաջարկություն «երեխաների պաշտպանության միջազգային օրը»՝ հունիսի 1-ը, հայտարարել տոնական, ոչ աշխատանքային օր:

### ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ

## ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴ ԳԱՐՐԻ ՂԱԼԱՄՔԱՐՈՎ



Մայիսի 23-ին, 75 տարեկան հասակում, կյանքից հեռացավ հիանալի մանկավարժ, հասարակական գործիչ, դերասան, թարգմանիչ եւ վրացագիր հեղինակ, հիանալի թբիլիսցի Գարրի Ղալամքարովը:

Իր ողջ աշխատանքային կյանքը նա համեստ ու բարեխիղճ կերպով նվիրաբերեց մանկավարժական գործունեությանը՝ կենսաբանություն դասավանդելով մայրաքաղաքի տարբեր դպրոցներում: Բարեխիղճ աշխատանքի գնահատականը գործընկերների շրջանում մեծ հեղինակությունն էր, տարբեր սերունդների աշակերտների սերն ու հարգանքը: Մանկավարժական գործունեությանը զուգահեռ Գարրի Ղալամքարովի կյանքում նշանակալից էին պոեզիան ու թատրոնը: Նա Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության անդամ էր, բանաստեղծություններ էր գրում վրացերեն եւ ռուսերեն, թարգմանում հայ բանաստեղծների գործերը, դրանց թվում եւ Ղազարոս Աղայանի «Մանուշակը»: Նրա գործերը հաճախ են տպագրվել բանաստեղծական տարբեր ժողովածուներում:

2012 թվականին լույս տեսավ նրա բանաստեղծությունների «Սրտի խորքից» ժողովածուն: Վերուստ շնորհված դերասանական տաղանդն էր գուցե, որ Գարրի Ղալամքարովը դարձավ թբիլիսյան ժողովրդական «Շրջանցիկ նրբանցք» թատրոնի համահիմնադիրն ու դերասանը:

Անտարակուսելի է, որ նրա գրական ժառանգությունը կպահպանվի հայ ու վրաց գրականության գանձարաններում:

***Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միություն, Թբիլիսիի «Շրջանցիկ նրբանցք» ժողովրդական թատրոն, «Վրաստան» թերթ***

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Արցախի հերոս գեներալ ... Հարությունյան: 4.Ինքնիշխան պետություն Հարավարեւմտյան Ասիայում: 7.Մրգի տեսակ: 9.Ստեփանավանը նախկինում: 10.Հայ-իրանական դյուցազնավեպ՝ Ռուստամ ...: 11.Գյուղական վառելիք, քակոր: 12.Վերքի հետքը: 17.Օժանդակ բայ: 18.Կարծախում ծնված տաղանդաշատ աշուղ: 20.Բաղնիքի ոտնաման: 21.Վառ կարմիրը: 22.Առարկայի հատկանիշ: 24....պետ, ...մել: 25.Քաղաք Ֆրանսիայում: 26.«Ժիզել» բալետի հեղինակը: 28.Ցուցական դերանուն: 29.«... է հիմա, շատ ... է» (Արմենչիկի երգացանկից): 31.Կուրո..., ծուլո...: 32.Անորոշ դերանուն: 34.Ամերիկահայ երգչուհի Շերիլին Սարգսյանի կեղծանունը: 35.Մետրոյի կայարան Թբիլիսիում: 37.ԱՄՆ-ի Ազգային ժողովը: 39.Ֆիլմ՝ «... բաբան եւ 40 ավազակները»: 40.Պուտպուտուրիկ, տարբեր գույների: 41.Հովհ.Թումանյանի հերոսուհի: 42.Հետ ...: 45.Աշակերտ, սովորող: 46.Աշակերտի 45 րոպեն դպրոցում: 47.Որձ, տղա: 48.Անցնած օրը: 49.Գինու կավե աման: 50.Ժամանակի միավոր: 51.Քաղաք Արեւմտյան Հայաստանում: 53.Գերմանացի ակտիվիստ, կանանց իրավունքների պաշտպան: 54.Հայկական զովացուցիչ ըմպելիք: 55.Օժանդակ բայ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Նկարիչ Մինաս Ավետիսյանի ծննդավայր գյուղը: 2.Գեղեցիկ ծաղիկ: 3.Ավ.Իսահակյանի ստեղծագործություններից: 4.Հաճելի համ: 5.Զույգ քաղցրաբլիթներով շոկոլադապատ քաղցրավենիք: 6.Թբիլիսիի Խոջիվանքի պանթեոնում թաղված մեծ վիպասանը: 7.Բանջարանոցային բույս: 8.Վահան Միրաքյանի ստեղծագործություններից՝ «...ի որսը»: 11.Քաղաք Հայաստանում: 13.Երգչուհի Լուսինե Զաքարյանի ամուսինը՝ Խորեն ...: 14.«..., ուժեղ ձայնով նրանց սպասում, տաղ էինք ասում» («Հին օրհնություն»): 15.Հայտնի փողոց Թբիլիսիի կենտրոնական մասում: 16.Գյուղ Մասիսի լանջին, որն ամբողջությամբ քանդվել է երկրաշարժից: 17.Ֆրանսիայի նախագահը՝ ... Մակրոն: 18.Վրացական թատրոնի եւ կինոյի դերասանուհի: 19.Գ.Սունդուկյանի գրական հերոս: 23.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 24.Հաճելի գույն: 24.«Վա՜յ, քո ...ը դրկողի» («Տերն ու ծառան»): 30.Կղզային պետություն Հնդկական օվկիանոսում ... Լանկա: 32.Քաղաք Իտալիայում: 33.Թանկարժեք գործվածք: 34.Իրանական ժողովուրդների վիպերգություն: 36.Կապի միջոց: 37.Տաքեւի ճոճվող ...ը: 38.Մաշտոցյան այբուբենի 22-րդ զինվորը: 42.Վրաստանի թագավոր: 43.Քաջ, անվախ: 44.Երկրի բնական արբանյակը: 45.Մտերմիկ, շատ մոտ: 46.Հարյուր տարի: 47.... ու գնալ: 52.Անձնական դերանուն:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Օսլո: 8.Ակնանտես: 10.Խանութ: 11.Ազնի: 12.Պանով: 15.Մարիա: 17.Պրակ: 20.Յաման: 23.Արական: 26.Տնանկ: 27.Ծերանոց: 28.Միր: 29.Հալավ: 32.Ագա: 34.Ես: 36.Մարի: 38.Սնում: 39.Գագաթ: 42.Միտք: 44.Զանազան: 46.Ավարա: 49.Տհաճ: 52.Տեգր: 53.Կառ: 54.Արաղ: 55.Դիանա: 56.Ջմեռ: 57.Պանի: 58.Տակ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Բոխի: 2.Վան: 3.Լաթ: 4.Զագա: 5.Լեւոն: 7.Սագարած: 9.Կույր: 12.Պայտ: 13.Նումա: 14.Վանկ: 16.Ալանի: 18.Արենա: 19.Կար: 21.Անհամ: 22.Անջար: 24.Կամք: 25.Նորեն: 30.Լալի: 31.Փիրք: 33.Գրազ: 35.Սույն: 37.Խան: 40.Գանա: 41.Թառ: 42.Մով: 43.Տիրանա: 45.Աբեղա: 46.Արդի: 47.Ակատ: 48.Առակ: 50.Հում: 51.Ճառ: 52.Տապ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445